

ՈՒԹԵՐՈՐԴ ՏՍՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ:

Օտարաբարբաղիք գիտում են ուղղակի
Тужако. Редакция „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ 1880 ԹԻՒՆ

Կը ՀՐԵՏԵՐԸԿՎԻ ԸՄԵՆՆ ՕՐ, բացի տոն և տոների հետևեալ օրերից:
Լրագրի դիւրը և պրօգրամման նոյն են մնում: Մենք ստանում ենք ՍԵՓԸԿԸՆ ՀԵՌԸԳԻՐՆԵՐԻ: «ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարվան 6 ռուբլ: Գրվել կարելի է ՄԻԼՅՆ ԽՄԻՆԳՐԸՏԸՆ մէջ:
ԸՌԸՆԶԻՆ ՀՄԸՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատր: Օտար քաղաքներից պէտք է զիմել հետևեալ հասցեով ТИФ-ЛИСЪ Редакция «Мшакъ»:
Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Բազուի ապագան.— Եւրոպին տեսութիւն: Նամակ ֆոթոյալից: Ներքին լուրեր: Արտաքին տեսութիւն: Թիւրքիա: Նամակ ֆոթոյալից: Սառն լուրեր: «Մշակի» հետադիւրներ: Յայտարարութիւններ:

ԲԱԳՈՒՒ ԱՊԱԳԱՆ

Օտարազգիները, մանաւանդ ամերիկացիները, որոնք գալիս են Մոսկովի կառ և այցելում են Բագուի շրջակաների նաւթի աղբիւրները, զարմացած են մնում տեսնելով բնութեան այդ հրաշալի հարստութիւնը: Մի և նոյն ժամանակ նրանք չեն կարող չը նրկատել որքան անխնայող կերպով վարվում են տեղացի արդիւնահանները նաւթային հարուստ նիւթի հետ:
Առհասարակ բնութեան մէջ ոչինչ յաւիտենական չը կայ. ինչպէս բարածուխի, կամ ուրիշ հանք, այնպէս էլ նաւթի աղբիւրները կարող են սպառվել և մի անգամ թէ՛ և գուցէ հեռու ապագայում, անպատճառ կը սպառվեն: Արեւմտ բնութեան ամեն մի նիւթի հետ պէտք է խնայողաբար և գիտութեամբ վարվել և ոչ թէ ի զուր վատնել բնութեան հարստութիւնները: Պարզ է որ անխնայողաբար վարվելով բնութեան հարստութիւնների հետ, բնական արդիւնքները աւելի շուտ կը սպառվեն, քան թէ եթէ մարդը խմաստու-

թեամբ և խնայողաբար օգտով բնութեան ամեն մի արդիւնքից:
Բայց ի՞նչ ենք տեսնում: Բագուի նաւթի արդիւնահանութիւնը, ինչպէս Մոսկովի կառ և Կովկասի բոլոր արդիւնահանութիւնները, գլխաւորապէս հայերի ձեռքումն է: Իսկ հայը, մեծ մասամբ, ի՞նչպէս է վերաբերվում դէպի ամեն արդիւնագործութիւն կամ արդիւնահանութիւն... Հայը չընչին բաներում միշտ խնայող է, իսկ խոշոր բաներում վատնող է, ահա հայի յատկանիշը...
Բագուի մէջ գետեղված են այժմ բաւական շատ հայեր, որոնք հաւաքվել են այդտեղ մեր երկրի ամեն կողմերից: Նրանց գրաւել է այդտեղ այն շահը, որ տալիս է նաւթի արդիւնահանութիւնը: Բայց մեր հայերը հարստութեան ետեւից ընկնելով անխնայ սպառում են բնութեան ոյժերը: Մի հարուստ հայ կապիտալիստ խնայում է մի երկու, երեք հազար ռուբլ որ փոքր ի շատ օրինաւոր ուճիկ տայ մի մասնագէտ տեխնիկին, վարձում է էժան գնով մի տգէտ մշակ մարդուն, որին նշանակում է գլխաւոր կառավարիչ իր նաւթի հորերի վրա, և կորցնում է այդպիսով նաւթի հազարաւոր տակառներ իւրաքանչիւր տարին... Եւ նաւթի այն քանակութիւնը որ նա ի զուր կորցնում է, անդառնալի կերպով կորչում է և ամբողջ երկրի համար,

որովհետեւ նաւթը թափվում է գետնի վրա, մեծ քանակութեամբ տարածվում է դաշտերի վրա, ծծվում է գետնի մէջ և անհետանում է: Բացի սորանից որքան շատ թանգաղին նիւթ կորչում է նոյն իսկ նաւթի մշակութեան ժամանակ, որովհետեւ նիւթի մշակութիւնն էլ լինում է անկանոն, չէ կատարվում գիտնական խիստ և խելացի մեթօդային համեմատ:
Տասնաւոր տեղացի երիտասարդներ աւարտում են ամեն տարի իրանց տեխնիկական ուսումը ռուսաց բարձրագոյն զբոսրոցներում,—բայց հայ կապիտալիստը երբէք չի վարձի իր գործի համար մի մասնագէտ կառավարչին, այլ աւելի լաւ կը համարի վարձել մի տղետ, անգրագէտ բանւոր մարդուն, որ մի կողմից կը գողանայ, իսկ միւս կողմից տգիտութեան պատճառով ի զուր կը վատնի բնութեան հարստութիւնները և այդպիսով ահագին փաստ կը պատճառի թէ իր տիւնօջ և թէ երկրի արդիւնահանութեան... Բայց փոյթ չէ հայ կապիտալիստին. նա կամենում է միայն էժան կառավարիչ ունենայ, իսկ հետեւանքների մասին նա չէ մտածում... Կա չէ մտածում որ այդպիսով նա անհամեմատ աւելի շատ է կորցնում, քան թէ եթէ մեծ ուճիկ տար օրինաւոր մասնագէտ կառավարչին...
Մենք ասացինք որ Բագուի մէջ գետեղված են այժմ բաւական շատ հայեր: Բագուն մեծ ապագայ ունի. որպէս հայաբնակ և հարուստ քաղաք նա ժամանակով գուցէ շատ մօտ ապագայում կարող է դառնալ մեր երկրի երկրորդ մեծ կենտրոն, մանաւանդ երբ պատրաստ կը լինի բազու-թիֆլիսեան երկաթուղին, որի կառուցումն արդէն հաստատված է կառավարութեանից:
Բայց եթէ հայ կապիտալիստները կը շարունակեն նաւթի արդիւնահանութեան վերաբերութեամբ իրանց բռնած անհաշիւ, անխնայողական, անգործնական, վատնող ընթացքը,—շատ ժամանակ չի անցնի և հայերը ստիպված կը լինեն գործից յետ քաշ-

վել և նրանց տեղը կը բռնեն ռուս և օտարազգի կապիտալիստները:
Երբ որ այդ կը դառնայ կատարված իրողութիւն, այն ժամանակ հայերը կը հասկանան որքան անհաշիւ է մի կողմից խնայել անհրաժեշտ և համեմատաբար չընչին ծախսերում, և յիմարաբար վատնել խոշոր բաներում, կորցնել և սպառել բնութեան հարստութիւնները:
Բագուն նշանաւոր է իր նաւթի հարստութեամբ. նա է գլխաւոր հայ ազգաբնակիչութիւնը: Բայց երբ որ հայը իր անխելք վարմունքով ձեռքից կը թողնի նաւթի արդիւնահանութիւնը, Բագուն, որ կարող էր հայաբնակ հարուստ քաղաք դառնալ, կարող էր դառնալ իր բազմամարդութեամբ և հարստութեամբ երկրի երկրորդ կենտրոն,—հետոյհետէ կը դատարկվի հայերից և կը բնակվի օտարազգիներով:
Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳՈՒԹԱՅԻՆՑ
9 նոյեմբերի
Ինչ գեղեցիկ զգացմունք է տիրապետում մարդու վրա, երբ տեսնում ես փողոցներում երկաթաբեկի գրքերը ձեռքներին և ժպտող երեսին ուսումնարանից տուն դառնալիս, բայց քանի առաւել ուրախալի է համոզվել, որ ուսման տարբեր գործը դառնում է այնպիսի անձանց ձեռքին, որոնք ամենայն հոգով գործված են իրանց գործին, որոնք իրանց նշանակութեան բարձրութեան են հասած:
Պատահամբ գտնեցի Վոլոյիստով, հետաքրքիր եղայ փոքր ի շատ ծանօթանալ հայոց ուսման գործի հետ: Քուլթայի հայոց ուսումնարանի առթիւ «Մշակի» մէջ սովորող մի քանի նամակներ և նկատողութիւններ, և ես չեմ կարող շատ ընդարձակ քննել այդ հարցը, քանի որ շատ տեղեկութիւններ էլ չունեմ: Տեսածիս և լսածիս հետ թող թող արվի ինձ հարողել ընթերցողներին այն ապագութիւնը, որ Վոլոյիստովի ուսումնարանը գործից վրաս:
Քուլթայի ուսումնարանը գտնվում է հայոց եկեղեցու մօտ, քաղաքի ամենալաւ մասերից մեկում. այդ ժամանակաւոր բնակարանը, որտեղ ուսումնարանն է, բաղկացած է երեք սենյակից. բուն եկեղեցուն կից կառուցանվում է երկար կառուցարանի շէնքը, Ռիօն գետի ափի վրա, որտեղից բացվում մի գեղեցիկ տեսարան: Ռիօն գետի աջ ափում, բայց—ազատ սփռված են այգիները, ուրեմն առողջապահական կէտից տեղը ամենայնպէս է: Այդ շէնքը կառուցանվում է հնորէն տէր Գալիթ քահանայի, որը իր գործու-

նէութեամբ յայտնի է Վշակի ընթերցողներին: Շէնքը զեռն ևս պատրաստ չէ, բայց պատրաստ. լու միտք ունեն յառաիկայ նոր տարվայ սկզբում: Անհամբերութեամբ սպասում են այն օրին, երբ ուսումնարանը կարելի կը լինի տեղափոխել այդ նոր շինութեան մէջ, ուր հնար է ընդարձակել ուսումնարանական գործը, չը զգալով տեղի նեղութիւն, և այն ժամանակ հնար կը լինի կատարել այն ցանկութիւնները և այն ձգտումները, որոնք ձեռնարկողները կեանքի նպատակն են կազմում:

Բայց չը պէտք է խօսենք և գուշակենք ապագան, որովհետև ժամանակը, այդ անպատ դատարարը, ցոյց կը տայ մեզ ճշմարտութիւնը: Թւի թէ հայոց ուսումնարանը փութալիստում վաղուց է որ գոյութիւն ունի, բայց հասարակութեան և լրագրութեան ուշադրութիւնը նա իր վրա չէր դարձնում, ապացոյց, որ ուսումնարանը այցելում էին փոքրամիւլ երեխայք: Իսկ վերջին մի քանի ամիսներու, երբ օրիորդ Գայիանէ Յովհաննիսեանը եկաւ փութալիստ, երեխայոց թիւը երկը չորս անգամ աւելի աճեց և տեղի նեղութիւնից ստիպված շատերին մերժում են և չեն ընդունում: Հետաքրքրվում են ուսումնարանով ոչ միայն փոքր լի շատէ զարգացած մարդիկ, այլ և արհեստաւորները և մասվածաւորները: Հասարակութեան այդ համակրութիւնը ուրախելի և միջնաբերական է: Որտեղից ծագեց այդ, ո՞ր է դրա սկիզբը: Շնորհիւ այն սուրբ վարդապետութեան, այն ջերմեանը որ թեան—այն բարձր մարդաբնութեան, վերջապէս ձեռնարկողներին այն սիրտ, որով նրանք իրանց բուրի հոգին դրել են այդ գործի վրա և անձնատուր են նրան մինչ ինքնամոռացութիւն, մինչ անձնազոհութիւն, ահն շնորհիւ դրանց գործը ստեղծվել է: գործի աջողվելուն շատ օգնում են և նոյն իսկ աշակերտները, նրանց սէրը և յարգանքը զէպի օր: Գայիանէ հասնում է իր ծայրագիտ աստիճանին: Ամեն մէկը բարդ է համարում իրան համար խօսել, զրուցել օրիորդի հետ— և շատ հասկանալի է, երեխայքը մեծերիցը առաւել լաւ են զգում իրանց հետ ունեցած յարաբերութիւնը և կարելի է շատերը նրանցից չեն սովոր տեսնել իրանց ամբողջ անգամ այնպիսի ջերմ սրտակցութիւն, այնպիսի հոգատարարութիւն, որպիսին ուսումնարանում են տեսնում: Վստահ ասում են, որ աշակերտներին յարաբերութիւնը զէպի իրանց ուսուցչութիւնը— այս վերջիններին զէպի ուսումնարանական գործը ունեցած յարաբերութիւնը ամենաճշտ չափ ու կշիռն է: Այդ սիրտը յարաբերութիւնները ծընողքն ևս այնպիսի տեսնում են. եթէ օրինակ, տկարանում է մէկը երեխաներից—ինքը օր: Գայիանէն գնում է նրա տունը—հիւանդ աշակերտի սիրտն, նրան միջնաբերական համար և ծնողացը մի բարի խորհուրդ տալու և վերջապէս նրա նիւթական կեանքի որքան յարմար լինելը տեսնելու և քննելու համար:

Հասկանալի է այսուհետեւ թէ ինչ տպագրութիւն է գործում չլրացատողներին վրա այսպիսի մի վեհ մարդասիրութիւնը: Պակաս չեն միջնաբերական ծնողները բարոյապէս, լսելով եկեղեցումը իրանց որդիներանց ներդաշնակ և քաղցր ժամատաղութիւնը հայոց ձայնագրերով: Մի խօսքով, օր: Գայիանէն իր այն յարաբերութեամբ, որ ունի զէպի ուսումնարանական գործը, իր սիրտը զէպի աշակերտները, իր խորհուրդներով, որ տալիս է ծնողացը, նա լրացւեալ գրաւել է ժողովրդի սէրը և համակրութիւնը ու հաստատութիւնը: Օր: Գայիանէն ինչ նպատակներն որ կամենար մտցնել ուսումնարանում, որոնք այլ հասնականներում կարող էին անհնար համարվել, այստեղ ընդունվում են միայն առանց բողոքի, այլ և մեծ շնորհակալութեամբ և յարգանք: Գութալիստ, օրինակ տղայքը և օրիորդները ուսումնարանումը միասին խօսեն և նստում և եթէ վերջինները յարաբերութիւնները չը լինէին ծնողաց և ուսումնարանի մէջ, նրանք կարծեմ, որ չէին ասի թէ, «եթէ ուսումնարանումը այդպէս են անում, ուրեմն այդ լաւ է և այդպէս էլ պէտք է լինի»: Թէ ինչպէս է գնում իսկապէս ուսումնարանը, ևս միջոց չունեցալ տեղեկանալ, բայց պէտք է գուշակել քանի որ նա ընթանում է այնպիսի մի մասնագետի առաջնորդութեամբ, որպիսին է օր: Գայիանէ (օրիորդ պարագիւլ է ձրենկայի տարրական ուսումնարանումը), ուրեմն պէտք է բողոքովին ապահովված համարվի: Ախտա միայն, որ ուսուցչիները ընտրութիւնը փութալիստում խիտ սահմանափակված է և չը կայ բաւական նիւթական միջոց աւելի փորձառու դատարար հրաւիրելու համար: Գանցանք պէտք է համարել հայ հասարակութեան կողմից, մասնաւոր փութալիստի հասարակութեան, եթէ չը ջանան օգնել ուսումնարանին, ոչ թէ որպէս զի ուսումնարանը ունենար զոյգութիւն միայն, այլ և ծաղկեր, զարգանար: Գարմար զէպում, յարմար միջոցներով միտք

կայ ժամանակին աւելացնել դասատուներ, ընդունել գիշերթիւղիներ և պատրաստել ժողովրդի համար ուսուցչիներ և ուսուցչուհիներ, իսկ թէ նշանակութիւն կարող է ունենալ այսպիսի մի ուսումնարանը, թող մտածի ընթերցողը:



ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Ստացանք Վշակիան թատրոնի վերանորոգելիք: Մ. Բէհրուհեանցից հրատարակվող ժողովածուի 9-որդ տետրակը, որ պարունակում է «Փակված դրան մօտ» մեանխօսութիւնը, թարգ. Յ. Տէր-Գրիգորեանի: և թատրոնական ժամանակագրութիւն:

ԱՍԽԱՒԱԿԱԿԻՑ մեզ հարգում են, որ օրերուն տեղացի երիտասարդների նուիրատուութեամբ 70 ր. են հաւաքել տեղական ուսումնարանների համար մանկական գրքեր բերել տալու:

Մեզ հարգում են ԱՍԽԱՒԱԿԱԿԻՑ, որ տեղական ուսումնարանների ուսուցչիները մտադիր են ուսումնարանին կից մի ընթերցարան բաց անել: Բացի այդ մի քանի երիտասարդներ մտադիր են թատրոնական ներկայացումներ տալ:

ԲԱԿՈՒՆԻՑ մեզ գրում են. «Օրերուն մի հայ երիտասարդ մի ուսուցչի վրա ասորձանակ արձակեց: Օրիորդի աչքը վառված է: Չարագործը բանտարկված է: Բայանանան երկաթուղու կարանի մօտ անպատ չարագործները սպանել են մի մարդու: Մինչև այժմ Բագրի մէջ չեն: Ս. Նազարեանի հոգեհանգիստը չեն կատարել:»

ՄՈՂՎՈՒԻ երկսեռ ուսումնարանների հոգաբարձութիւնը խնդրում է մեզ յայտնել նրա հրատարակական շնորհակալութիւնը այն անձանց, որոնք նրանց ուսումնարաններին գրքեր են նուիրել:

ՂԱՐՍԻՑ մեզ գրում են. «Նոյեմբերի 22-ին այստեղ մի անգը պատահեց, որ քաղաքացիների վրա սարսափ գցեց: Այնպատ չարագործները ցերեկով, կէս օրին մտել էին մի տուն, որ գտնվում էր քաղաքի կենտրոնում, դատարանի դիմացը, պօլիցային մօտ, մի զօրապետի բնակարանին զբերել կից, խնդրել էին տան մէջ գտնված երկու կանանց և տան մէջ եղած իրեղենները յայնչտակել էին: Ժամի 4-ին երկույնս այդ լուրը արագութեամբ քաղաքը մէջ տարածվեցաւ: Բնակիչները շտապով հաւաքվեցան միջակ տան մէջ և գտան շտապակազմ կանանցից մէկին մատանի մէջ, միւսին ախտի մէջ, կանանցից մէկին երեք ամսական երեխան օրօրացում հեկեկում էր: Չարագործները գտնա երեխային ինչպէս էին: Երկու եղբայրները, որոնք իրանց խանութներում աշխատում էին, վերադառնալով իրանց տունը այսպիսի դրութեան մէջ գտան: Հասարակութիւնը վրդովված է, չարագործները դեռ չեն գտնված: Տեսնենք տեղական պօլիցային ինչ կանէ՞:»

ԹԻՖԼԻՍԻ տաճկահայտակ հայթուիները խնդրում են մեզ տպել հետեւեալ տողերը «Մշակ» № 108-ի մէջ ապված պ. Խոսեիվի պատասխանի վերաբերութեամբ. «Մեր բողոքին պ. Խոսեիվը շատ անհիմն կերպով պատասխանում է: Պարտք ասում է, որ մենք սուտ ենք ասում: Այդպիսով ինչ կը լինի: Դա մեզ կասէ, որ սուտ ենք ասում, մենք նրան կասենք, որ նա է սուտ խօսում: Ինչ կը վերաբերի արհեստաւորներին կանոնադրութեան 80, 164, 182, 184 յօդուածներին, մենք այնտեղ ոչ մի տող անգամ չը գտանք, որ արդարացի էր պ. Խոսեիվի վարմունքը: Գանկարի կը լինի իմանալ թէ արդե՞ք այդ յօդուածները իրաւունք են տալիս պ. Խոսեիվին թիւրքահայտակ հայթուիներից երեքական բուր վերջին փողոցներում հայ ծախիւր վեց բուր վախճան կողմի տուգանք առնել մի հայթուիներից, որ ներկայ չէր գտնվել միւս հայթուիների մօտ յուզարկութեան հանդիման: Ար»

զեօք իրաւունք են տալիս այդ յօդուածները նրան առանց որ և է վճար երեք օրով փակել մի հայթուի խանութ և եթէ նրա վարմունքը իրաւացի և օրինաւոր է, ինչի համար պ. կապանաձէի հրամանով վերադարձնում է մի հայթուի 25 ր. 50 կ. որ նրանց բռնութեամբ առել էր: Մենք գործը կը հասցնենք ուր հարկն է, դուք եթէ կարող էք պատասխանեցէք մեր հարցերին լրագրութեան միջոցով և ձեր ասածները փաստերով և օրէնքով ապացուցէք և ոչ թէ բաւականացէք ասելով միայն. «հայթուիները սուտ են ասում»: ասելի հաւանական է, որ դուք, մի մարդ սուտ ասէք, քան թէ մենք, քսան և չորս թիւրքահայտակ հայթուիներնա:

ՄԵՆՎԱՐԱՔԻԼՈՍՍՅՈՅ մեզ գրում են հետեւեալը. «Այս օրերս մի պարոն իջմիծնից վերադարձաւ Ղարաբաղիստ և զարացած նկարագրում է իջմիծնի վարդապետների վարմունքը ուխտաւորաց հետ. «Ես իրեւանում, տարացած խօսում էր պարոնը, ծունկ չըբած աղաչեցինք, պաղատեցինք, խնդրեցինք մի վարդապետից, թէ իջմիծնի թանգարանի դուռը բաց արա, տեսնենք, ինչ ուղումես տանք, հնար չեղաւ. հայր սուրբը մեզ անպատելով հեռացրեց և ասաց, «թանգարանի դուռը արժանաւոր մարդկերանց համար ենք բացում և ոչ թէ ձեզ նմանների համար: Այժմ հարցնում ենք, հայր սուրբ, այն եղն ու կարազը, այն մաժուտն ու թանկապար, այն աշխատանքը և մատաղը ամեն օր խաղտում էք, ո՞ւմ տուածն է, քո ասած արժանաւորները, թէ մեզ նման վերաբացինք»:»

Մեզ հարգում են ՀԱՄԱԿՈՒՄԱՆ գիւղացի: Անցեալ օրը Համազիւսի գիւղում մի կին հրացանով սպանեց: Սպանութեան մէջ մեղադրվում է նրա մարդը և այդ պատճառով էլ բանտարկված է:

Մեզ գրում են հետեւեալը. «Շնորհակալեցիք միջակ հիմայ երեք անգամ աւազակութիւն է պատահել ՂԱՐԱՔԻԼԻՍԻՍՏՈՒՄ և ամեն անգամ տարել են ջուղանքով ցորեկ, գարի, ախլա և թխած պատրաստի հաց: Ղարաբաղի յաւարակութեան համար այս լաւ երեւոյթ չէ, պէտք է ուշադրութիւն դարձնել, որ «ճուր զօրը ձիւս գող չը դառնայ»:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԹԻՖԼԻՍ

Անդլիան պահանջելով Թիւրքիայից Փոքր-Ասիայում անյապող վերանորոգութիւններ անել, դրանով նա մի մեծ զարկ տուեց և կայսրութեան միւս նահանգներին վերանորոգութիւնների գործին: Թիւրքիան իրաւացի վախճանով իր կայսրութեան կէտից աւելին բացատրութիւն կազմել, և մտածելով որ սրատու չէ նա կարող է կորցնել պետական ընդհանուր հաւատարկութիւնը, որից Աստուած զիտէ թէ ինչ վտանգներ կարող էին առաջանալ, ուստի նա մի առանձին եռանդով բուրեց անգլիական պահանջած վերանորոգութիւնների հետ միացնել նոյնպէս և միւս նահանգների ընդհանուր վերանորոգութեան գործը, համաձայն Բերլինի դաշնագրութեան օրէնքներին:

Բ. Կուռն ուրախանում էր, որ մի այսպիսի քաղաքականութեան է հետեւում, որովհետեւ նա մի այսպիսի հսկայական գործին ձեռնամուխ լինել և չը յաջողային, այնքան պարտաւելի չէ, —գործը չարագանց մեծ էր, հետեւապէս և շատ ժամանակի կարօտ.— և երկրորդ դրանով աւելի դիւրութեամբ կարելի էր համաք անել Ներքուսի հետ և ամենքի աչքերը թող փչել:

Բայց նրան չը թողնէին հետեւել իր խաբեայական քաղաքականութեանը. օտար պետութիւնները հասկանալով նրա խորամանկ քաղաքականութիւնը, մեծ պաշտպանութիւն տուին անգլիական առաջարկութեանը, և միաձայն հաւանութեամբ առաջարկեցին Բ. Կրան իրագործել ամենից առաջ Բերլինի

դաշնագրութեան 23 և 61-րդ յօդուածները: Ամենքին յայտնի է, որ 61-րդ յօդուածի առիթով մի յանձնաժողով կազմվեց, որի գործունէութեան մասին շատ փոքր տեղեկութիւն է լսվում: Կամ աւելի լաւ է ասել ոչ ինչ տեղեկութիւն չէ լսվում: Մինչդեռ մի ուրիշ յանձնաժողով էլ մասնաւորապէս նշանակված է եղել 23-րդ յօդուածի վերաբերութեամբ, որը պէտք է գնար և ճանապարհորդեր, հետադուր և խորը կերպով ուսումնասիրել տեղային օրէնքները, ժողովրդական ծէսերն ու սովորութիւնները, և յարմարացնելով այդ բոլորը նոր սահմանադրական պահանջներին ձեռք տար վերանորոգութիւնների գործին: Այս բոլոր ֆանտաստիկական գեղեցիկ ցնորքները զրկած հրատարակված էին սուլթանների ողորմած հատմանի մէջ. բայց սրա մասին յանձնաժողով անգամ չը կայացաւ:

Իսկ ինչ կը վերաբերի Արեւելեան Ռումելիայի մասին կայացած յանձնաժողովին, այն էլ անուանով միայն գոյութիւն ունի, և ուրիշ ոչինչ: Մինչդեռ եւրօպական պետութիւնները ստիպում էին Բ. Կրան անյապող սկսել վերանորոգութիւնները Փոքր-Ասիայում: սուլթանը տեսնելով որ սպանում են մինչև անգամ իր զահին, իսկոյն մի նոր հատուկ հրատարակեց, որի մէջ նա մինխտրութեամբ սաստիկ հրամաններ է տալի անմիջապէս բախել վերանորոգութիւնների գործը. ամենքն սկսում են նոր եռանդով գործել. մինխտրական խորհուրդներ են կազմում, դեսպաններ են հրաւիրում այդ խորհուրդներին մասնակցելու. ամեն բան ուղղում կարգադրում են, յանձնաժողովներ են ուղարկում զաւանները. և այս բոլորի հետեւանք լինում է Թիւրքիայի աւանդական ոչինչը: Անդլիան լուում է, միւս պետութիւնները, որոնք աւելի մեծ մեծ գործերով են զբաղված, պաղում են, և ամենքին առաջ պատկերանում է Թիւրքիայի նուիրական statu quo:

Անգլիան լուում է, մենք այդ հասկանում ենք— կատարած շանք թիւրք ցցեցին— ասում է ժողովրդական առածը, բայց, որ լուում են և միւս պետութիւնները, այդ մենք չենք հասկանում: Մեր կարծիքով Թիւրքիայից չէ էլ կարելի մի այսպիսի մեծ պահանջ անել, որ նա անպատճառ իր սեփական ոյծերով կարողանայ իրագործել վերանորոգութիւնների գաղափարը և յիբաւի ինչ կարելի է սպասել մի փոսած հիմնարկութիւնից, որը դուրսը կորցրած չը գիտէ մինչև անգամ, թէ ինչպէս ողբայ իր մերձաւոր անկուր: Թիւրքիան այժմ այլ ևս պետական մարմին չէ կազմում: Նա դեռ վերջին պատերազմից առաջ դադարել էր գոյութիւն ունենալ ինչպէս Ֆինանսական պետութիւն, իսկ այժմ հաստատ կարելի է ասել, որ նա մինչև անգամ իբրև կատարիչ իշխանութիւն pouvoir executif էլ գոյութիւն չունի: Թիւրքիան այժմ նմանվում է մի ուրուականի, և դեռ էլ չեն դադարում այդ ողորմելուց նոր պահանջներ անելուց: Մեր կարծիքով Թիւրքիայի վրա յոյս դնել այդ մի և նոյն է ոչինչ չը կամենալ անել: Այսպիսի մեծ-մեծ գործեր, ինչպէս են դատաստանական վերակազմութիւնը, ուսումնարանների հիմնարկութիւնը, ճանապարհների հարգողացութիւնները, փանդարմիտի կազմութիւնը, այս բոլորն էլ Թիւրքիայի ոյծերից շատ բարձր բաներ են, որ բանց համար աւելի զօրեղ, աւելի ազդու միջոցներ են հարկաւոր: Արանց համար հարկաւոր է եւրօպայի միացեալ ոյժը: Իսկ յոյս կա պել Թիւրքիայի վարչութիւն կազմող անգամների բարեկողմութեան վրա, դա կատարել գնորդ է, որովհետեւ, որտեղ պաշտօնատարը վարձատրված չէ, այնտեղ անկարելի է եռանդ և բարեկողմութիւն սպասել: Թիւրքիայի նշանաւոր պաշտօնատարներն ամենայն իրաւամբ են նկատում, որ նախ քան թէ գործերը կանոնա-

Լոր ընթացք կը ստանան, և նախ քան թէ նրանք կը ձգտեն լրանց հայրենիքի մեծու- թեան ու փառքի գաղափարին, այդ բոլորից առաջ նրանք զեռ կարօտութիւն ունեն փո- ղի:

Ա.Ս.Ս.Կ ԹԻԻՐՔԻՍՏԻՑ

Կ. Պոլս, 2 Նոյեմբերի

Քաղաքական հորիզոն, ինչպէս կը տեսնուին ըստ իրար կր խոստանայ: Մենք էլ, դուք էլ յոգնեցանք սպասելով Պեռլինի վերաժողովին ի վեր քաղաքական վերակենդանութեան այդ արևն, որ տարի ու կէսէ անկէ շարունակ ձագիւտ վրայ է է և չը ծագող: Երևի, այս անգամ մէկ քանի նշաններ դուրս պիտի գան ամպերու ետևից, բայց ամբողջ փոքր-Ասիոյ մէջ, զէջթուցից միայն այդ բարեբը պիտի վայելեն:—Մեծ Հայքի և փոքր Հայքի հայերը կարող են սպասել և երկարօրէն խորհել զէն ի ձեռն բողբոջու կերպին առաւելութեանց և վերահաստատու վրայ:

Չէջթուրը դեռ իր պատճառը կերպարանքէն չէ մերկացած: Կայ երեք ամիս, անգլիական մի թերթ Տեյլը Կիւս, հրատարակեց թէ Պապիկ իշխանն իր հետ 300 լաւ սպասաւորներով քաջեր առնելով զէպի սարերը քաջուած, անկէ երբեմն երբեմն յարձա- կուսներ կընէ թուրք զորացիներուն վրայ: Այդ լուրը ստույգ էր և մինչև ցարդ Պապիկ լեռները ման կուգար: Կարճ ու կար մի մարդ է, կըսեն, սիրան ու բաղուր կարծի ինչպէս երկամբ: Քաղաքապետական նորութիւնէ ևս զուրկ չէ: Նախորդ յեղափոխութեան ժամանակ, Պապիկ գերի կիցայ, որով պարագլուխներու հետ: Գերաշնորհ Հասու- նը, Ֆրանսիական դեսպանէն քաջալերուելով, Բ. Դրան մօտ կը միջամտէ և այն տեղ ուր հայոց Պատրիարք կը պարտուի, Հասունը յաղթութիւն կը տանի: Չէջթուրի գերիները կազմուի բանակէն, բայց այսպիսի չնորճի մը համար, Հասունը նոցա պայման դրած էր քաթօլիկութիւն ընդունին և Պապիկ ու իր ընկերները Չէջթուր վերադառնալու համար, ընառ անտեղութիւն չեն տեսներ, ճանա- պարհին, Պապը Քրիստոսի իբր փոխանորդ ճանա- չել և դառնան:

Պապիկին այս վերջին խրոման պատճառ եղաւ այն կայսերական հրամանն որ կը պատուիրէր Չէջ- թուրի մէջ թուրք զինուորներ բնակեցնել և զի- նուորանոց շինել: Չէջթուրից, երկու տարուայ ապստամբութեան թէպէտ և խիստ յոգնած և ճարտար, չէին կարենար սակայն հանդուրժել որ իրենց լեռներուն մարտը թըրքերին զաղիը չը- նունէ ապականուէր և իրենց աղատութիւնը փո- խուէր և լինէր պարզ ստրկութիւն: Աշարղութեան արժանի կէտ մ'է այս: Գարատաղիներուն և կամ պրոնտայիններուն պէս, զէջթուրից քաջաւերութիւն չեն գտներ և ոչ մէկ կողմէ, տարիներ առաջ իրենց եղած խոստումներէն, ուրիշ բան չունեցան, բայց թէպէ այդ խոստումնց դրժումին դատուցիւնը: Այսու ամենայնիւ անվանող և քաջ մտացին և կի- լիկիայի այդ մասին վիճակն այնքան ծանրակիւս դարձաւ որ Եւրոպական պետութիւնք վերջնապէս հարկ զգացին Բ. Դրան քով ոտք կոխել որ բաւա- կանութիւն տրուի նոցա պահանջներուն: Կայսե- րական քովիցը Մազհար-բաչա և Նուրեան է- ֆէնայի Յամիս յառաջ որոշեր էին մի թուրք զայ- անգամ և մի նայ օգնական-կառավարիչ հաստա- անել Չէջթուրի մէջ և այդ որոշումը գործադրեցին, բայց զէջթուրից էլ, միւս կողմէ, իրենց նաւանող և բարի սովորութիւնը գործադրեցին, այն է, փայ- տով, որով թուրքը Չէջթուրէն դուրս վճռուել իր բոլոր զինուորներուն և պահել հայ պաշտօնեայն իբր կառավարիչ իրենց երկրին: Այս ղէպքէն յե- տոյ, Հայէպի Եւրոպական հիւպատոսը Բարձրա- սոյն Գուռն առաջարկեցին որ վերջնականապէս Չէջթուրին մի նայ զայնպէս անուանուի և մէկ քանի արտօնութիւններ (franchise) չնորհուց: Այսպէս այս խնդիրը կը մաներ փափուկ կերպա- րանքի մը տակ, երբ յանկարծ լուր տարածուեցաւ թէ Հայէպի առաջական հիւպատոսը, պ. Նովնօֆ իր պաշտօնակիցներուն հետ այս մասին համաձայն չէր: Չենք գիտեր որչափ ստույգ էր այս լուրը, բայց մի քանի օր յառաջ, ինչպէս, ամենահասա- տարով մի աղբիւրէ, թէ իշխան Լապանօֆ, Պատ- ռիարքին մատանջ հարցումին իբր պատասխան ցոյց տուեր և Բէթրպուրիէն եկած մի հեռագիր, որ կը հրամայէր Բ. Դրանին պահանջել որ Չէջթու- րի խնդիրը հայոց նպատակաւ կերպիւ լուծուի ստանայ: Պատրիարքին հարցումը դեր մը անչուտ

խաղացի է այս գործին մէջ և մենք տրամադի- րենք կարծիք թէ ձեռ կայսրութեան բարձր շրջա- նակաց մէջ հասկացուել է, թէ հարկ կայ թուր- քահայոց համակրութիւնը չը կորսնցնեն:

Չէջթուրի հարցն այն եփուս վիճակին հասեր է, ուր որ և է խնդիր անպատճառ մի կարգադրութիւն կը ստանայ: Այն չէնք որ թուրքերն ամենայն ա- րագութեամբ շտապեցին կանգնել գորանոց մ'ը- նելու համար, Պատրիարքը մի բարձր շրջանի մէջ ըսեր է թէ իր ընդարձակութեամբ շատ յարմար է հայ գաղմապարտին պաշտօնատուն լինելու: Ճշմա- րիտը, թուրքերը զժգո՞ր չը պէտք է լինեն, որով- հետև կարող են այժմէն իսկ ըսել թէ այդ չէնքը, բոլորովին անօրոտ չը պիտի մնայ, ինչպէս միւս շատ գորանոցներ, այլ պիտի ծառայէ գոնէ հայոց էթէ ոչ Համբոյ զինուորներուն:

Քովիտէրներու ուղղորդողութիւնը, ինչպէս վերին և Ստորին Հայաստանի մէջ, այնպէս ևս Հայէպի կողմից, փախկեցան իրենց աղմուկից անբարձու- նեութեամբ: Երևի, այդ բանն ամենքին սրտին մէջ տակաւին տարակարգ չէ ներշնչած քով- սերական պաշտօններու օգտաւարութեան վրայ: Քովիտէր մ'ալ երէկ գնաց ղէպ է Չէջթուր, և բարեբախտաբար, շատ հաւանականութիւն կայ որ այս վերջինը չը պիտի նմանի ոչ Նուրեան էֆէն- ղիլի և ոչ էլ Մազհար փախայի: Նոր քովիտէրը, հայ է և հայաստանցի, որ Միջնօթ փախայի երեսի- լեանական ժողովին մէջ աթուռ ունեցաւ, լաւ էլ համարաւ թողուց այդ վաղամտելի խորհրդարանին մէջ: Հայաստան վերջերս գնացեր էր փափուկ պաշտօն մը կատարելու: Կառավարութիւնը շատ չէ ակոբարած որ Չէջթուր արդէն մի մարդ կու- դարկուի, և իրեն համար, անհաճելին այն է որ Անգղիոյ, Գաղղիոյ և Ռուսիոյ դեսպաններն իրենց հիւպատոսներուն հասցէով յանձնարարական գիրեր տուած են նմա՞ Վաղուց արդէն Չէջթուրից ի- րենց դատին համար մի ազգայնէր փաստաբան կը խնդրէին Պատրիարքարանէն, բայց որու որ առա- ջարկութիւն եղաւ, չընդունեց: Կ. Պոլս, մեր ճարտարախօս ազգային երեսիփորձներն, զէրուկ փոր ունենան թէ վատած կուրծք, ազգայնէր կը դառնան, երբ խնդիրն Եւրոպա իբր պատուիրակ կըստ է. իսկ երբ Հայաստան և կամ Չէջթուր գնայու առաջարկ կը լինի նոցա, ո՞՞, այն ժամա- նակ ամեն մարդ հիւանդ է: Քովիտէրն, յո- դացաւ, բարակացաւ, ինչ գիտնամ, բժշկարանին բոլոր ակտեր վարակած կը լինին աղվիս ամեն զաւառական և բուզանական ներկայացուցիչները: Նոր քովիտէրն ուրեմն կառավարութեան պաշ- տօնեայ չէ, իսկ պատրիարքարանին այս պատուի- րակութեան գործին մէջ ունեցած մասին գաղով, կարելի է ըսել թէ միակ իւրը չէ այդ գործն, այն- քան ուրիշները Չէջթուրից համար ալխատու- թիւն կը թափեն, մի ալխատուութիւն սակայն որո՞ ղրդիւր միտ Ներսէս ինքն է: Մեր այս Ռիչլըիէն ճարտ դատ ամեն դեսպանի գործունեութեան զարանակ (renort) ըստ իր կամը լարել և պրկել: Ո՞ր է այն Լէյսարը, այն իրարմով անդ- իրական գեսպանը որ չէրքէզներու պաշտպան կանգնելով, կըսեր մի որ Պատրիարքին ձեռքը որ հայոց համար չէրքէզներն, այդ հանձնարող յե- ղը եւ մտանամո՞՞ Ներսէս չէրքէզները մտանալ չուզողն, այսօր թուրքերն անգամ մտանալու ղիրք բռնած է և արձակ համարձակ ամենքին կը յայ- տարարէ թէ այսուհետև ընդհատուին ալխատու- թիւն է թուրքերուն հաճելի և բարեխալ մնալու ջանալ: Որչափ շուտ այս, որչափ արագ կատար- վեցաւ Սըր Օսթէն Լէյսարի քաղաքական հաւա- տափոխութիւնը:—Մէջմէտի հաւատարմութեան վրայէն յոյսը կարելով աչքերը Քրիստոսի հաւա- տացեալներուն վրայ դարձունել: Աղբուր է անտա- րակչու կամ երկրորդ և կամ Լոնտոնային, և աւելի հաւանակորէն Լոնտոնային թորիներն, եթէ ոչ Քրիստոսի, գոնէ Ուիկ, այսինքն ազատականաց կուսակցութեան ստիպելու ն համար տալ, և զժ- բաղղաբար անդիական կառավարութեան համար խորհրդարան քիչ ժամանակէն պիտի գումարուի: Որպէս հեռատես մարդ, թորիները պէտք է զգա- ցած լինեն թէ իրենց ալխատարական գործե- րը խիստ և կծու քննադատութեան առարկայ պիտի լինեն թէ լրտեսու և թէ երեցփոխանաց ժողովին մէջ և Ֆրոնտէր և Կաթմիթներն, շատ ուժգին յարձակումներ պիտի բնեն լրտե Սալա- պրիլի վրայ իւր արեւելեան քաղաքականութեան համար: Այդ իրարանցումին մէջ, շատ զլխարկներ կարող են վար խնայ, ինչպէս նաև Պերսոնֆիլա և ընկերութեան զլխարկը: Եւ մենք պէտք է մի- չինք թէ Անգղիայի պէս մի երկրի խաղախն դե- կավոր լինելն ունի իւր շատ անոյշ հրապրոչներն, որոնցմէ մահկանացու մը, ինչպիսի է Պերսոն- Ֆիլա, փառապարտութեամբ համակ շարուած մի էակ, շատ զփուստու կը հրաժարուի: Այսպէս աւելի թերեւ ճիշտ է բացատրել այն աղբու և

կարուկ ընթացքն որ Պերսոնֆիլա ուղեց լուսնի թիւրքիայի նկատմամբ, զրկելով Պերսոնֆիլա ծովա- խորը մի անարկու նաւատորմից և մի տեսակ վերջնագիր (ultimatum) Բարձրագոյն Գրան մատուցանելով: Աղտարականք պիտի կարենան ցցունել թէ այդ միջոցէն աւելի հզօր միջոց մ'ու- նէր Անգղիա, թուրքերը բռնադատելու որ բարե- նորոգումներ սկսեն: Անտարակոյս ոչ, բայց չա- ռամիտներն չը պիտի համոզին և այդ չա- ռամիտներն (ազատականները) լուսնելու համար, նորին վաճառութիւնը պ. Լէյսար անպէտ չը համա- րեն Պատրիարքին կրկին և կրկին խնդրել որ իր յարաբերութիւնները զարդեցնէ ազատականաց կուսակցութեան հետ: Ներսէս իր բանը գործը գիտէ, անչուտ կը իյէ թէ երբեմն ինքն էր որ պաղատական և լազգին կերթար Լէյսարի ոտքը և կը խնդրէր որ Լէյսարը թուրքին հետ միացած արգէլը չը լինի հայոց ինքնավարութեան: Այսօր դերերը վերի վայր չընուած են:—Այսարան այն- պէս է, կը փոխուի ու կը փոխուի, իւր հետ և փոխելով մեծերուն ու պոպոկներուն վիճակը: Չենք գիտեր թէ ինչ պատասխաններ է Պատրիար- քը բաց շատ լաւ գիտեմ թէ մէկ քա- նի ժամանակէ ի վեր, պատրիարքարանի զրապիները գիշերն էլ իրենց պատկան- ներուն վրա կանցունեն գրեթէ: Ընչ կը գրեն:— Բայտնի բան, հայոց Պատրիարքարանն ուրիշ զբաղ- մունք չէ կարող ունենալ, բայց եթէ բողբո, գան- գատ, հարստահարութեանց տեղեկագիր խմա- գրել, որք ամենն ալ կերթան Եւրոպան, նա մա- նաւանդ Լոնտոն ողողի: Մարդիգ ֆի Պաթ որ Յ ամիս յառաջ Կ. Պոլս կը գտնուէր, խմնալով թէ խորէն Նար-պէյ Անգղիա պիտի կըստ, Լոնտո- րայէն իր կուսակցութեան կողմէ հեռագրաւ հը- թաման կը խնդրէ նմա մի միջոցաւրէն ընդու- նելութիւն ընելու անչուտ միայն հայ ազգին ի պատու, բայց Պատրիարքը, Լէյսարի խնդրածը միտք բերելով, հաճութիւն չէ տուած: il faut bien menager la chevre et le chou:

Ընդհանուր կարծեաց մէջ, բաւական փոփո- խութիւններն կատարուել է և մեծ թիւով հայեր սկսեր են հաստատապէս հաւատալ թէ Անգլիա վեր է վերջոյ պիտի լուծէ հայոց խնդիրը: Մա- սնելով թուրքերուն: Լէյսարի խոսքերը մասնաւո- րապէս նպատած են այս զաղափարաց յեղաշը- ման: Իսկ մեզ հաղորդեցին թէ անգլիական դես- պանը ըսեր է մի թիւրք նախարարի ձեթէ հայոց բան մը չընէք, մենք անգլիացիքս պիտի ընենք: Ճշմարտը, մենք ալ այս խոսքէն յափշտակուելով մեր յոյսեր անգլիացիքս վրա պիտի գնէնք, եթէ մեր աչքին առջև չը գար և չը ներկայանար այն անողոր հարկն որու մէջ անգլիական կառավա- րութիւն այսօր միայն կը գտնուի թիւրքին դէմ ատելութեան ցցունելու: Այդ ատելութիւնն այն- պիսի չէ որ հայոց օգուտներ բերէ:

Թէ ինչ հաւատ կը սուսնան ժողովուրդն առ- հասարակ բարեկրօնական գործադրութեան մա- սին, զժուար չէ խմնալ քանի որ և տխուրն այս տեղ է, բարձրատեսիան նախարարը անգամ չեն յուսար թէ մի լուրջ գործ պիտի կարողա- նան ընել: Մահուտ Ներսէս բաշան ըսեր է Պատ- ռիարքին բացորոշապէս. «Բարեկրօնագում, մարե- նորոգում, բան մը պիտի չըլլայ: Այսպիսի յայ- տարարութիւն մ'ետք, հակախալի բան է թէ Պատրիարքն վերստին ձեռք կառնու հայոց ինքնա- վարութեան խնդիրն, այն համեմատութիւններով որ զայն Պերլինի վերաժողովին ներկայացուցի:—Եւ յետոյ, հայերը չը պէտք է տխրեն տեսնելով թէ թիւրք կառավարութիւնը կը մերժէ շարունակ վե- րանորոգում մը ընելու: Աւելի լաւ, իւր այդ քա- ղաքականութիւնը, ինչպէս իր Հերսէի, Պոստայի և Պուլլաբիայի ազատման պատճառ եղաւ, այնպէս ալ աւելի ծանրակառութիւն պիտի տայ հայոց խնդրին և 50—600 տարի սպասող աղք մը կարող է 50—10 տարի տակաւին սպասել աւելի մեծ բարեբ մը ձեռք բերելու համար:

ԽԱՆԵ ԼՈՒՐԵՐ

Փարիզի ապելլացիական դատարանում քննվում էր այս մտիկ ժամանակ շատ հետաքրքիր մէկ գործ: Իմար զեղազործը տուեց բժիշկ Լեռնին սխալմամբ մէկ զեղ փոխանակ միտի: Սխալմունքը պատահել է այդ երկու զեղբոր զարմանալի նմա- նութեան պատճառաւ, բայց զբարձրագուր ունե- ցել է շատ տխուր հետեանքներ: Տուած զեղը պարտականու էր իր մէջ սատակ թողն: Բժիշկը հա-

ւատացած լինելով որ զեղազործը տուեց նրան իր պահանջած զեղը, և խաբված նոյնպէս զեղի սատակ արտաքին նմանութեամբ անձամբ իր ձեռքով պատրաստեց հիւանդի համար նոյն զեղից որը հիւանդը ընդունելով վախճանվեցաւ: Գիա- կի զննելը բացեց մահուան պատճառը: Փարիզի պրոֆեսորական հակողութիւնը սկսեց մեղադրել և յանցաւոր էր գտնում զեղազործին և բժշկին ա- նողոյ մարդասպանութեան մէջ: Դտեցեաւ երկու հարց. կարող է արդեօք բժշկի համար արդարա- նալու միջոց կամ պատճառ համարել զեղազործը զանազաններ կախազանց մեծ դժուարութիւնը և պէ՞տք է արդեօք զեղազործը սխալմունքի առա- վին յանցաւորը, համարվի միակ պատասխա- նատու անձն: Գատաստանական առաջին կայս- րանը գտաւ մեղաւոր անողոյ մարդասպանութեան մէջ թէ զեղազործին և թէ բժշկին և վճռեց ա- ռաջինին ենթարկել տուգանքի 200, իսկ երկրոր- դին 25 ֆրանկի: Բժիշկը Լեռնը այս վճիկ վրա գամբաւ բերեց բարձր դատարանին: Բարձր ա- պելլացիական դատարանը գտաւ որ զեղազործից միմտանց նմանութիւնը չէ կարող ներելի պատճառ լինել սխալմունքի, պատճառ՝ այդ նմանութիւնը երեւում է միայն հարեանցի նայելու ժամանակ, իսկ բժշկի պարտաւորութիւնն է՝ իր կոչման համա- ձայն, զննել և հետազօտել աւելի մանրամասնաբար: Այս պարտաւորութիւնը ներկայ հանգամանքնե- լում առաւել էր պահանջուում բժիշկ Լեռնից, մասնաւանդ որ, ինչպէս ինքը խոստովանում է, նոյն զեղի պատրաստելու ժամանակ ինքը նկատեց մի առանձին հոտ: Այս հանգամանքը, նմանապէս և հիւանդութեան երեւոյթները որ երեկեայն աւելի վաղ միւս հիւանդի վրա՞ նոյնպէս ընդունողի նոյն զեղը, պէ՞տք է դրանէն բժշկին ուշադրութիւնը: Այս հիմունքների վրա բարձր ապելլացիական դա- տարանը հաստատեց առաջին դատարանի վճիկը, փոխելով միայն պատժի չափը, զեղազործին, բա- ցի 200 ֆրանկի տուգանքի, վճռեց ենթարկել եր- կու շարժ բանապարտութեան, իսկ բժշկի տու- գանքը որ էր 25 ֆրանկ չինեց 200 ֆրանկ:

Երկարուող գնացքը պատրաստվում է շարժվել տեղից: Հանապարտորդ սիգարտներ բերնում մտ- նում է առաջին կատար վազոնի կուպէն: Տեսնե- լով որ այնտեղ նստած էր մի տիկին, նա կամե- նում է իսկոյն ձգել պատուհանից սիգարան: Բայց տիկինը արդէն վրաւորվեցաւ և առաց. «Այստեղ չեն ծխում, պարոն: Շատ զարմանալի է մանկ սի- գարով կուպէն, որտեղ նստած է կին մարդ:—Նե- րեցէք, տիկին, մեծ քաղաքավարութեամբ, պա- տակասեց ճանապարհորդը. դուք երեխ նկատե- ցիք որ ես արդէն կամենում էի ձգել սիգարաւ: Բայց ես չեմ ներգայնի ձեզ իմ ներկայութեամբ, ես հեռանում եմ: Հաջիւ թէ ճանապարհորդը դուրս եկաւ վազոնից, ասան պատահեց մի պատուած հազուատով կեղտոտ մարդու, որից տարածվում էր չուրը զարելի հոտ:—Ո՞ր կրամով էք գնում, հարցնում է ճանապարհորդը սիգարով:—Ներդուր: —ճանապարհորդը էք երբեք առաջին կատար վազո- նում:—Ոչ:—Անն ձեզ տունակ առաջին կատար, որ ինձ այլ ես այժմ չէ հարկաւոր: Ես կը ցոյց տամ ձեզ իմ տեղը: Այս ատելով վերջինիցի ճանա- պարհորդը շուտով տարաւ ներս ձգեց պատուա- ծին առաջին կատար կուպէն, որտեղ նստած էր Երեսեր տիկինը և նոյն իսկ ժամանակ գնացքը շարժվեց տեղից:

ՄԵՍԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԳՈՒՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՑ
Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻՆ, 27 Նոյեմբերի: Պետական բանկի 50% տոմսերը առաջին շրջանի արժէ 93ր. 50 կ, երկրորդ 92 ր. 75 կ, երրորդ 94 ր., չորրորդ 94 ր., ներքին 50% առա- ջին փոխառութեան տոմսեր արժէ 232 ր., երկրորդ 226 ր. 50 կ, արեւելեան առաջին փոխառութեան տոմսեր արժէ 90 ր. 50 կ, երկրորդ 90 ր. 50 կ, ոսկի 7 ր. 87 կ: Ուռուաց 1 րուրը Լոնդոնի վրա արժէ 25,12 պէնս, ուռուաց 100 րուրը Գերմանիայի վրա արժէ 214 մարկ: Փարիզի վրա 265 ֆրանկ: Տրամադրութիւնը թողյ է:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԲՈՒՆԻ

